



ԴՈՒՔ ԵՔ ՍԱՀՄԱԿՆՈՒՄ ՁԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Ամեն տասը տարին մեկ, ԱՄՆ մարդահամարից հետո, Կալիֆորնիան պետք է վերագծի իր Կոնգրեսական, Նահանգային Սենատի, Նահանգային Ժողովի և Նահանգային հավասարեցման խորհրդի շրջանների սահմանները՝ արտացոլելու համար նոր դաշնային տվյալները: Քվեարկողները ՆԱԽ օրենքը (Voters FIRST Act) այս իշխանությունը տվեց Կալիֆորնիայի քաղաքացիներին, երաշխավորելով նոր և արդար շրջանների գծումը՝ հատուկ շահերից, քաղաքականություններից կամ քաղաքական ազդեցությունից ձերբազատ:

Կալիֆորնիայի Շրջանների վերադասավորման քաղաքացիական հանձնաժողովը (Citizens Redistricting Commission) կանցկացնի հանրային լսումներ և կընդունի հանրային նկատողություններ: Սա ձեր պատեհությունն է մասնակցելու ստեղծմանը արդար և թափանցիկ շրջանային սահմանների, որոնք լավագույնս ծառայում են Կալիֆորնիայի մարդկանց շահերին: 2021 թվականին, Հանձնաժողովը կաշխատի մշակել և վավերացնել շրջանային քարտեզները՝ Նախքան քարտեզների հաստատագրումը Կալիֆորնիայի Նահանգային քարտուղարին:

»»»» ՆԵՐԳՐԱՎԿԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐ ««««

Հանրային հավաքի ընթացքում՝

2021 թվականի գարնան և ամռան, Հանձնաժողովը կանցկացնի հավաքներ, որտեղ կարող եք ներդրում կատարել հեռախոսով՝ հանդիպման ժամանակ, կամ էլեկտրոնային միջոցով՝ հանդիպումից առաջ: Առաջիկա հանրային հանդիպումների մասին ավելին կարող եք պարզել այցելելով մեր կայքը՝ www.WeDrawTheLinesCA.org:

Էլեկտրոնային միջոցով՝

Կարող եք նաև Հանձնաժողովի մոտ ներդրում կատարել էլ-փոստի միջոցով՝ VotersFirstAct@crc.ca.gov կամ ձեր քարտեզը գծելով «Գծեք իմ համայնքը» (Draw My Community) գործիքի միջոցով և այն Հանձնաժողովին ներկայացնելով, այցելելով այս կայքը՝ DrawMyCACommunity.org:

Գրավոր՝

Ձեր թղթե փաստաթղթերը կարող եք փոստով ուղարկել այս հասցեով՝ California Citizens Redistricting Commission, 721 Capitol Mall, Suite 260, Sacramento, CA 95814

Քաջալերում ենք ձեզ, որ թարմ տեղեկությունների համար կանոնավորաբար այցելեք մեր կայքը փ սոցիալական լրատվամիջոցների ալիքներ:



California Citizens Redistricting Commission
721 Capitol Mall, Suite 260, Sacramento, CA 95814
(916) 323-0323 -- WeDrawTheLinesCA.org



@WeDrawTheLinesCA